Հավելված N 10
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահի
«19» մայիս 2021 թվականի N 46-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նորմատիվ իրավական այլ ակտերով, Կոմիտեի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանով, Կոմիտեի նախագահի և Կոմիտեի գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, Կոմիտեի և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Կոմիտեի նախագահը Գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:
4. Բաժինն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Կոմիտեի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների աշխատանքները:

II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) Կոմիտեում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային նախապատրաստության ապահովման կազմակերպումը,

2) Կոմիտեի գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմանն օժանդակումը,

3) Կոմիտեի զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլաններից բխող գործառույթների իրականացման կազմակերպումը,

4) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների և համակարգի կազմակերպությունների կողմից զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքների կազմակերպումը,

5) Բաժնի իրավասությունների շրջանակներում՝ Կոմիտեին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ նպատակների և խնդիրների կատարման ապահովումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի գործառույթներն են՝

1) իրականացնում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Կոմիտեի աշխատողների պաշտպանությունը և Կոմիտեի համակարգի կայուն գործունեությունը ապահովելու նպատակով կազմակերպչական համալիր միջոցառումները,

2) Կոմիտեի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

3) իրականացնում է Կոմիտեի քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային ծրագրերի, պլանների մշակման և կատարման աշխատանքները,

4) կազմակերպում է զորահավաքային նախապատրաստության աշխատանքների և զորահավաքային նախապատրաստության մասով պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստման աշխատանքները,

5) անցկացնում է զորահավաքային նախապատրաստության շրջանակներում ուսումնական վարժանքները, կազմակերպում և իրականացնում է ուսումնավարժական հավաքներն ու պարապմունքները,
6) ապահովում է Կոմիտեում աշխատող պահեստազորայինների ամրագրման, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,
7) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության «Կոմունալ-տեխնիկական» հանրապետական ծառայության աշխատանքների իրականացումը,
8) ներկայացնում է քաղաքացիական պաշտպանության արդյունավետության զարգացման և կատարելագործման նպատակով առաջարկություններ, այդ թվում՝ ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների ավելացման (նվազեցման) վերաբաշխման վերաբերյալ,
9) տրամադրում է Կոմիտեի ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով աշխատանքների կազմակերպման կապակցությամբ խորհրդատվություն,
10) կազմակերպում է Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների և համակարգի կազմակերպությունների կողմից զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքները, ցուցաբերում է մեթոդական աջակցություն,
11) մշակում և ներկայացնում է քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,
12) իրականացնում է Բաժնի գործառույթների հետ կապված գաղտնի աշխատանքները,
13) իրականացնում է «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով և Կոմիտեի կանոնադրությամբ Բաժնին վերապահված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

7. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Կոմիտեի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

8. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը:

9. Բաժնի պետը հաշվետու է Կոմիտեի նախագահին և անմիջական հաշվետու է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

10. Բաժնի գործունեության համակարգումը վերապահվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

11. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:

12. Բաժնի պետի, Բաժնի մասնագետի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով: